



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆՆՆԱՊՈԼԻՍ 2 ՅՈՒՆԻՍ

ՀԵՌԱՐԳԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Կալէճիոյ • 1 յուլիս •

Ս. Կալէճիոյ • 1 յուլիս •

Բոլոր զաղղական բանակը Սինչի գետն անցաւ : Սարտենիացիք Բարսիլայի բերդը կը պաշարեն : Ստացած օգնական զօրքերս եւ Սարսիլայի իշխանին բերած 35000 զօրքը կարող ըլնա զիս Սերնայի մօտեանալով առանց բան մը վտանգի մէջ ձգելու, որովհետեւ զօրաց բանակ մը Սիւրիս թողուցի Սանթուան գիտելու համար : Ուրիշ բանակ մ'ալ Պրեշան գումարեցի թիւրքն ճամբայները դիտելու համար :

Պրեշան, 4 յուլիս •

Բրուսիոյ կառավարութեան միջնորդութիւնը Ռուսիոյ կառավարութեան ընդունեցաւ :

Ստացաւ իշխանը Պրեշան պիտի երթայ միջնորդութեան գլխավոր կէտերուն վրայ Բրուսիոյ կառավարութեան հետ խորհրդակցելու :

Ս. Կալէճիոյ, 7 յուլիս •

Սարսիլայի կայսրն ու Ֆրանչեսկո Յովսէփ կայսրը գնադադարում մը ստորագրեցին մինչեւ օգոստոսի 15 :

Թշնամութիւնները երկու կողմանէ դադարեցան, եւ ամեն ազգի վաճառական նաւերուն ազատութիւն տրվեցաւ Եգիպտական ծովուն մէջ նաւարկելու :

Օկնադադարման պայմանները երկու բանակներուն կողմանէ ընտրված յատուկ դործակալներու ձեռք կարգի պիտի դրվին :

Եւս զինագադարումը ինչպէս յայտնի կը տեսնուի, Բրուսիոյ կառավարութեան կողմանէ առաջարկված միջնորդութեան արդիւնքն է :

Միջնորդութեան պայմանները գեո. յայտնի չեն, բայց կերեւի որ երկու պատերազմող կողմերն յառաջուց հաճութիւն տուած են անոնց : ապա թէ ոչ, Սարսիլայի կայսրը յանձն չէր առնուր այսպիսի երկար զինագադարում մը ընել, որ կրնայ շատ վնասակար ըլլալ իրեն թէ որ դեսպանատնութիւնները չյաջողին : Եւս պատճառաւ իրաւունք ունին յուսալու թէ քիչ օրէն հաշտութեան երջանիկ լուրեր ստանալու եւ աւետելու բարեբաղդութիւնը կունենան :

Սովորական ճամբով եկած լուրերը մինչեւ լսու • յուլիս 2 կը հասնին :

Բոլոր Եւրոպական լրագիրներուն էջերը Սովեթինօի պատերազմի վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններով զրաւեալ են, որոնց մէջէն կարեւորները քաղելով հոս կը դնենք :

Մ. Կալէճիոյ լրագրին մէջ հրատարակած տեղեկագրի մը նայելով Սովեթինօի պատերազմին մէջ Եւստրիական զօրաց թիւը 250 հազարէն աւելի է եղեր :

Վաղղիացւոյ նոր թնդանօթները շատ քիչ քանակով են Եւստրիացւոյ, որովհետեւ ռուսներն այնչափ հեռու կը հասնին եղեր, որ Եւստրիացւոյ թնդանօթները չեն կրնար եղեր պատասխան տալ :

Վաղղիացիք 720 պաշտօնակալ ունեցին եւ զարնված, որոց 150ը մեռեր են : 12 հազար ալ զօրական ունեցեր են մեռեալ ու վերաւոր :

Սարտենիացոյ կողմէն 49 պաշտօնակալ մեռեր, 167 վիրաւորվեր են : 642 զինուոր մեռեր, 3405 զինուոր վիրաւորվեր են : 1258 հոգի ալ անյայտ եղեր են :

Եւստրիացւոյ կողմէն 25000 հոգի հաշուեն :

6000 էն աւելի զերի, 30 թնդանօթ եւ 3 զրօշակ ինկեր է Վաղղիացւոյ ձեռքը :

Եւս պատերազմին մէջ զաղղիացւոյ Սիւիլ զօրապետին բանակը շատ քաջութիւն քած ըլլալով, Սիւիլ զօրապետը մարտախառն անուանեցաւ :

Եւսեան եկած տեղեկութիւնները 14000 հոգի կը հասցնեն զաղղիացւոյ ըրած կորուստը մեռեալ ու վիրաւոր : Իսկ Եւստրիացւոյ կողմէն 35-40000 ի կը հասցնեն : Եւս զարհուրելի անհաւատարմութեան պատճառ կը համարին զաղղիացւոյ նոր թնդանօթները որ ստակալի ջարդ ըրեր են աւստրիացւոյ զօրքերուն մէջ :

Սովեթինօն Պրեշանի Ս. Կալէճիոյ լրագրին զրկած նամակ մը կըսէ թէ զաղղիացւոյ ու սարտենիացւոյ հիւանդանոցներուն մէջ զարմանված վերաւորներուն չորս մասին երեքը աւստրիացի են, որոնք պատերազմի դաշտին վրայ թողվեր էին :

Ս. Կալէճիոյ լրագիրը կըսէ թէ այս վերջին պատերազմին մէջ երկու թշնամի բանակներն այն աստիճան կատարել յամառութեամբ կռուել են, որ շատ դիւքեր եօթն-ութ անգամ աւելի արգիւր են : Բայց վերջապէս աւստրիացիք ետ քաշվելու ստիպվեր են 14 ժամ պատերազմելու ետեւ :

Եւս յաղթութեան լուրը Փարիզ հասնելուն պէս բոլոր տունները զրօշակ

ներով ու ծաղիկներով զարդարվեր են եւ զիշերն ալ քաջաբըր լուսաւորվեր է :

Սովեթինօի պատերազմին ետեւ Եւստրիական կայսրն հետեւեալ յայտարարութիւնը ուղղեց իր զօրքերուն :

« Օրականք »

« Թշնամին որ կը կարծէր թէ մեզ Քիլիզէ գետին միւս կողմը կրնայ ձգել, Սինչի գետէն ասդին անցաւ : Բուր կայողեկացը ուրիշ ամեն ժամանակներու պէս Վաղղիոյ պատին արժանապէս պաշտպանուաւ : Սովեթինօյի յաղթութիւնը կը զերազանցէ թնդանօթի եւ Բասթիլիոյ պայծառ յիշատակները : Տան երկու էամ շարունակ 150000 մարդոց ձգուեցը ետ քշեցիք : Չեր ետանդ չի կրցաւ արգիլիլ ոչ թշնամույն բազմաթիւ թնդանօթներովը եւ ոչ անոր բռնած սհաղին դիրքերովը որ մինչեւ 3 ժամու ճամբայ տեղ կը տարածվէին : Հայրենիքը որ ձեր քաջութեանն ու յարստեւութեանը համար շնորհալալ կըլլայ ձեզ, կողբայ իր այն զուգըներուն վրայ որ ինկան :

« Եւրօ զրօշակ, 30 թնդանօթ եւ 6000 զերի առինք : Սարտենիացւոյ բանակը նոյն սրութեամբ դէմ դրաւ իրմէ շատ աւելի մեծ զօրութիւններու, ուստի եւ արժանի է ձեր քաջին քալելու : Թափուած արիւնը պարապ չլիտի երթայ Վաղղիոյ փառացն ու ժողովրդոց բարօրութեանը համար : »

Ս. Կալէճիոյ մէջ հրատարակված աւստրիական տեղեկագիր մը հետեւեալ կերպով կը խօսի Սովեթինօի պատերազմի վրայ :

« Յունիս 11/23 ին, աւստրիական բանակին աջ թեւը Բաձաօլիօի, Սովեթինօի ու Քալիօնայի դիրքերը ըրանց : 24 ին յիշեալ աջ թեւը թշնամին ետ քշելով մինչեւ Սիւիլ ձախ եւ Բասթիլիօն յառաջացաւ : Եւս օրը կէս օրէն երկու ժամ առաջ երկու բանակներն իրարու պատահեցան : Սեր ձախ թեւը Սիւիլից զօրապետին հրամանատարութեամբ մինչեւ Քիլիզէ գետը յառաջացաւ : Բայց կէս օրէն ետքը թշնամին գլխավոր զօրութիւնը Սովեթինօյ վրայ յարձակեցաւ : Սերինները զիւցսգնական քաջութեամբ պաշտպանեցին նոյն դիրքը, բայց չափազանց մեծ կորուստներ կրելով եւ զօրաց կարգերուն մէջ ինկած անկարգութիւնը ներքեւ շատ դժուար ըլլալով, միւս կողմանէ աւստրիական փաթիլի մը ելելով եւ ձախ թեւին դէմ թշնամաց զօրութիւնը մեծ նալով, Սերինները պարտաւարկեցան եւ քաշվելու դէպ ի Սովեթինօյ թեւէն եւ մեր աջ թեւը յաջողութիւն ձեռք բե-

րած էր՝ սարտենիացիները ետ քշելով Բանակին նահանջումը սկսած ժամանակ կը մուծը կոխած էր : »

Սովեթինօի պատերազմին մէջ դաշնակիցներուն յաղթող ելելը բարի ազդեցութիւն մը ըրաւ Լոնդայի մէջ եւ անմիջապէս արժէտոմանները բարձրացան :

Պրեշանի մէջ ալ նոյնպէս արժէտոմանները բարձրացան : Եւստրիական այն կը համարուի, որ դաշնակիցներուն յաղթող ելելովը հաշտութեան դուրծը կը դիւրանայ եւ պատերազմը շուտով վերջանալուն յոյսերը կաւեցան :

Հռոմի տէրութեան ժողովրդոց մէջ մտաց զրդուութիւնը վերջին աստիճանի հասած է : Պապական կառավարութիւնը մեծ դժուարութեամբ կը զսպէ ժողովրդը, եւ այս պատճառաւ տեղ տեղ արիւնհեղութիւններ ալ եղան եւ պապական զինուորները մեծ անգթութիւններ ըրին որով ժողովրդը եւս առաւել բորբոքեցաւ :

Հռոմի մէջ թէ որ զաղղիացւոյ պապական զօրքերը չըլլան ժողովրդը զսպել անհնար է :

Սովեթինօյ յուլիս 8 թուով հեռագրական լուր մը կը ծանուցանէ թէ Շվեյտսի Եւրոպիկայի Ռիպրթալաւորը որ երկար ժամանակէ ի վեր հիւանդ էր, նոյն առտուն վախճանեց :

Իրեն յաջորդ նստեր է իր օրդին Կալուստ Թի :

ՎԵՐԶԻՆ ՀԵՌԱՐԳԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Երէկ առտուն հետզհետէ լուր եկաւ Սինչիայէն հեռագրով թէ առջի օրը երեքշաբթի Ս. Սարսիլայի կայսրն եւ Ս. Ֆրանչեսկո Յովսէփ կայսրը Սիւիլ լաֆրանքայի մէջ տեսութիւն ընելով հաշտութեան նախաշաղկ պայմաններն ստորագրեր են :

Եւս մեծ ու երջանիկ լուրը մեծ ուրախութիւն պատճառելով մայրաքաղաքի մէջ, ստանիստուն զինը մէկէն ի մէկ լիջաւ :

Հաշտութեան պայմանները գեո. յայտնի չեն, բայց կը յուսացվի որ մինչեւ դաշտը թու յայտնի կըլլան :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի օրը Տափաղ Պուրպան Պայրամի տուն ըլլալով, Օգոստոս

* Այս բանի բուն վարդապետին ազդու են համարել խրատներսին և որ Անտարիայի մէջ աւերակացի բողոքականաց յարեալ մէկ քանի հաւաքողները վերադարձը են :

